# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 188-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 17 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 20-ը դեկտեմբերի 2024 թվականի թիվ 17 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 20.12.2024թվականի թիվ 17 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող <<Թաղեւս>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,033513հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

3. Արփա բնապահպանական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների թեկնածությունները հաստատելու մասին:

4. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,43216հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

5. Արենի համայնքի ավագանու 25.01.2024թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2024թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացումներ և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

6. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելու մասին:

7. Ամանորյա տոներին Արենի համայնքի մանկապարտեզներին 2-օրյա արձակուրդ տրամադրելու մասին:

8. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական ղեկավարի գրությունը քննարկելու և իրեն սեփականության իրավունքով պատկանող Նիվա մակնիշի ավտոմեքենայի համար 4 նոր անվադող հատկացնելու մասին:

9. Արենի համայնքի վարչական տարածքում մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկության թույլատրելի վայրերը սահմանելու մասին:

10. Արենի համայնքի ավագանու 28.11.2024թվականի թիվ 174-Ա որոշման և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 189-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԱԴԵՈՒՍ ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,033513ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 14-րդ կետը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, <<Թադեուս>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,033513հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0254-0031, հողատեսքը՝ խոտհարք) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության՝ մատուռ կառուցելու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

08914384

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 190-Ա

### ԱՐՓԱ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Արփա բնապահպանական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում Արենի համայնքի լիազոր ներկայացուցիչների անդամների թեկնածությունները՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված

Արենի համայնքի ավագանու

20.12.2024թվականի թիվ 190-Ա որոշման

ՑԱՆԿ

Արփա բնապահապանական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում Արենի համայնքի լիազոր ներկայացուցիչների անդամների թեկնածուների

| h/h | Անուն, Ազգանուն | Անձնագրային տվյալները | Լիազորագրի տրման ժամկետը |
| --- | --- | --- | --- |
| 1 | Արթուր Նազարյան | (անձնագիր՝ AU0299083, տրված՝ 04.06.2021թ., 037-ի կողմից | 3 տարի |
| 2 | Վարդան Աղաբաբյան | (նույնականացման քարտ 006127740 տրված 14.11.2017թ., 037-ի կողմից | 3 տարի |
| 3 | Գարիկ Աղաբաբյան | նույնականացման քարտ 006127245 տրված 14.11.2017թ., 037-ի կողմից | 3 տարի |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 191-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,43216ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 12-րդ կետը, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, <<ՏՐԻՆԻՏԻ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, 0,43216հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0350-0001, հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ ինքնակամ կառույցները օրինականացնելու նպատակով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 192-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.01.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2024ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 25-ը հունվարի 2024 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները

1.Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի.

1. 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ / հոդվածից պակասեցնել 500 000 ՀՀդրամ,

2. 4212 /Էներգետիկ ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 400 000 ՀՀդրամ,

3.4232 /համակարգչային ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 300 000 ՀՀդրամ,

4.4822/այլ հարկեր/ հոդվածից պակասեցնել 500 000 ՀՀդրամ,

5.4241/մասնագիտական ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 70 000 ՀՀդրամ,

6) 4267 /Կենցաղային և հանրային սննդի նյութեր/ հոդվածից պակասեցնել 150 000 ՀՀ դրամ

Նշված գումարներն ուղղել՝

ա. Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4264 /տրանսպորտային նյութեր/ հոդվածին 800 000 ՀՀդրամ, 4215 /Ապահովագրական ծախսեր/ հոդվածին՝ 150 000 ՀՀ դրամ,

բ. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4637 /դրամաշնորհներ համայնքային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածին 970 000 ՀՀ դրամ:

2. Գյուղատնտեսություն 04 բաժնի 02խմբի 04 դասի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 150 000 ՀՀ դրամ, 4269/ Հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածից՝ 550 000 ՀՀ դրամ:Պակասեցված 700 000 ՀՀ դրամն ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4637 /դրամաշնորհներ համայնքային և պետական ոչառևտրային կազմակերպություններին/ հոդվածին :

3. Արենիի այլ մշակութային միջոցառումներ 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /հոդվածից պակասեցնել 500 000 ՀՀ դրամ և ուղղել նույն ոլորտի 4269 /Հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածին:

4. Արենիի այլ մշակութային միջոցառումներ 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4236/Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 330 000 ՀՀ դրամ և ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4637 /դրամաշնորհներ համայնքային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածին :

5. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4239/ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 747 000 ՀՀդրամ, 4241 /մասնագիտական ծառայություններ / հոդվածից 473 000 ՀՀ դրամ: Պակասեցված 1 220 000 ՀՀ դրամն ուղղել նույն ոլորտի 4269 /Հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածին:

6. Նախադպրոցական ուսուցում 09 բաժնի 01 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/հոդվածից պակասեցնել 8 000 000 ՀՀ դրամ, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն /հոդվածից պակասեցնել 8 000 000 ՀՀ դրամ:

Նշված գումարներն ուղղել՝

1) Ջրամատակարարում և կոյուղու համակարգեր գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն /հոդվածին 14 000 000 ՀՀ դրամ,

2.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5134/Նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին 2 000 000 ՀՀ դրամ:

7. Արենի համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի՝ ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ եկամտատեսակում ավելացնել 306 036 707 ՀՀ դրամ և նշված գումարներն ուղղել՝

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112/Շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին 81 797 962 ՀՀդրամ,

2.Ջրամատակարարում և կոյուղու համակարգեր գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 5112 /Շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին 43 805 000 ՀՀ դրամ,

3,Ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 01 դասի 5112 /Շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին 59 441 000 ՀՀդրամ,

4. Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում գործառնական դասակարգման 06 բաժնի 04 խմբի 01 դասի 5112/Շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին 120 992 745 ՀՀդրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 193-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի «Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշումը և Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի դրական եզրակացությունը՝

Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 «Սոցիալական հատուկ արտոնություններ» տնտեսագիտական դասակարգման /4729/ այլ նպաստներ հոդվածից Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերել դրամական աջակցություն՝ 320000 ՀՀ դրամ գումարի չափով:

2. Գումարները հատկացնել վերոնշյալ ընտանիքների անդամներից ներկայացված դիմումատուներին՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

08914384

Հավելված
Արենի համայնքի ավագանու
20.12.2024 թ. 193-Ա որոշման

| ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ) | ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ, ՀԱՇՎԵՀԱՄԱՐ |
|---|---|---|---|
| Սարգսյան Սարգիս Նիկոլայի | 30 000 | Արփի | 010276301 |
| Բաբայան Լյուդվիգ Համբարձումի | 15 000 | Ելփին | 009573627 |
| Օհանյան Շուշիկ Սրեկանի | 10 000 | Աղավնաձոր | AU0204580 |
| Մարտիրոսյան Նինա Վոլոդյայի | 20 000 | Ագարակաձոր | AV0600759 |
| Մանուկյան Ռիմա Գարսևանի | 15 000 | Ագարակաձոր | AT0407441 |
| Մարտիրոսյան Լուսինե Սամվելի | 30 000 | Գնիշիկ | 009644386 |
| Մնացականյան Լիլիթ Արկադիայի | 50 000 | Խաչիկ | AT0660731 |
| Հայրապետյան Անուշավան Հայրապետի | 50 000 | Խաչիկ | 006121545 |
| Պողոսյան Արշակ Նորիկի | 50 000 | Խաչիկ | AT0406072 |
| Միքայելյան Ալվարդ Հակոբի | 50 000 | Խաչիկ | 009337197 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 320 000 | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 194-Ա

ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻՆ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ 2-ՕՐՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով,

Արենի համայնքի ավագանին որոշում է.

Ամանորյա տոներին Արենի համայնքի մանկապարտեզներին տրամադրել 2-օրյա արձակուրդ՝ 2024թվականի դեկտեմբերի 30-ին և 2025թվականի հունվարի 3-ին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 195-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԻՐԵՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՆԻՎԱ ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ 4 ՆՈՐ ԱՆՎԱԴՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հարգել Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական ղեկավարի գրությունը և իրեն սեփականության իրավունքով պատկանող Նիվա մակնիշի ավտոմեքենայի համար հատկացնել 4 նոր անվադող:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 196-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ) ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հոկտեմբերի 2-ի ՀՕ-361-Ն օրենքի 24.4-րդհոդվածի 3-րդ և 10-րդ մասերը

Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել որ Արենի համայնքի վարչական տարածքում մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկության թույլատրելի վայրեր են համարվում գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհները, մարզական հրապարակները և ֆուտբոլի դաշտերը:

2. Արգելվում է Արենի համայնքի վարչական տարածքում մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկությունը միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհներում և դրանց հարող տարածքներում:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

08914384

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 197-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.11.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 174-Ա ՈՐՈՇՄԱՆ Ս ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի ավագանու 28.11.2024թվականի << 2025 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 174-Ա որոշման հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ.

1) հավելվածի 20-րդ տողից հետո ավելացնել նոր 21-րդ տող հետևյալ բովանդակությամբ.

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | աշխատակիցների թվաքանակը | պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը | ծածկագիրը |
|---|---|---|---|---|---|---|
| 21 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 350000 | 350000 | 2.3-5 |

2) 21-ից 47 համարները վերախմբագրել 22-ից 56:

3) Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի աղյուսակի ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 27 | 27 | 7658800 | 7658800 |

4) Աղյուսակի վերջին՝ ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | 64,5 | 71 | 15006600 | 16031100 |

2. Արենի համայնքի ղեկավարին՝ մեկշաբաթյա ժամկետում դիմել ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 26.12.2017 թվականի «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 365-Ա որոշմամբ հաստատված հրամանում փոփոխություններ կատարելու առաջարկությամբ. այն է՝

1) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» 26.12.2017 թվականի թիվ 365-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ մասի, 2.3-րդ կետում ավելացնել նոր 5-րդ ենթակետ.

«ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ», ծածկագիր՝ 2.3-5,

3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**